

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՎՐԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑԸ՝ «ՍՈՒՆԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑ

1866 թ. սկսում են հրատարակել «Սոնն» ամսատետրը, որը Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի պաշտօնաթերթն էր, առաջին՝ հիմնադիր խմբագիրն էր Տ. Սաւալանեանցը: Հայ մամուլի ուսումնասիրողները հանդեսի առաջին տասը տարիները՝ 1866-1877 թթ. անուանում են հին շրջան: Այս փուլում խմբագիրներ են եղել նաեւ Մ. Մարկոսեանը, Ս. Խապանեանը: 1867 թ. Երուսաղեմ է գալիս Գարեգին Մուրատեանցը եւ ստանձնում է Սրբոց Յակոբեանց վանքի ժառանգաւորաց վարժարանի տնօրենի պաշտօնն ու գործօն մասնակցութիւն է բերում «Սոննի» հրատարակման աշխատանքներին: Ի դէպ, այդ շրջանում ամսօրեայի նիւթերի, բովանդակութեան արմատական փոփոխութիւն է նկատուում, որը ոչ միայն հրատարակութեան առաջին դժուարութիւնները յաղթահարելու, նկատուում, որը ոչ միայն հրատարակութեան առաջին դժուարութիւնները յաղթահարելու, այլեւ նոր խմբագրի գործունեութեան արդիւնքն էր, քանզի Մուրատեանցը հրապարակախօսական, պարբերականի խմբագրակազմում աշխատելու մեծ փորձ էր ձեռք բերել Թիֆլիսում:

1868թ. փետրուարեան համարում, «Հանդես պարգեւաբաշխութեան ժառանգաւորաց վարժարանի Առաքելական Սուրբ Աթոռոյս» վերտառութեամբ: Ուշագրաւ է, որ հետաքրքրուող իւրաքանչիւր ոք կարող է ներկայ լինել գիտելիքների ստուգատեսին: Արդիւնքները ամփոփուել են եւ պարգեւներ են բաշխուել Ս. Վարդանանց Արդիւնքները ամփոփուել են եւ պարգեւներ են բաշխուել Ս. Վարդանանց նահատակութեան տարեդարձի օրը՝ մեծ հանդիսութեամբ, որին մասնակցում էին Սրբազան Պատրիարքը, միաբանական ողջ ուխտը, քոյր եկեղեցիների ներկայացուցիչներ, աշխարհիկ հիւրեր:

Գ. Մուրատեանցի խօսքը իրեն շատ բնորոշ չերմ է եղել, հիւթեղ, հայրենասիրութեամբ առկեցուն, համեմուած պատմիչներից ու Աստուածաշնչից մէջբերումներով: Նա նկատում է, թէ Վարդանանց արինաներկ յաղթանակի եւ գիտութեան այդ իւրօրինակ միահիւստած հանդիսութիւնը գալիս է մէկ անգամ եւս հաստատելու, որ քրիստոնէութիւնը նահատակութիւն է, եկեղեցին՝ զինուորութիւն, սա մի պատերազմ է, որ սկսուել է վաղուց եւ աւելին է քան մարմնաւոր կոյրը, քանզի հոգու փրկութեան համար է այն մղուում: «Տասնեւինն դար է, որ այս փրկարար նահատակութիւնը կը շարունակի եւ օր աւուր կը յաղթանակէ ազատութիւնը՝ բոնութեան, նշմարտութիւնը՝ ստութեան, արդարութիւնը՝ անիրաւութեան, ... լոյսը՝ խաւարին եւ հոգին նիւթին»¹: Յաղթանակի պտուղներն աւելի շօշափելի կը լինէին եւ յաղթութեան դրօշը աւելի պայծառ, եթէ անհոգութիւնը, չպարտէին մարդկանց: աշխարհիկ մեղքերը, նիւթապաշտութիւնն ու անհոգութիւնը, չպարտէին մարդկանց: Ժամանակ կար, որ հային սպառնում էին զենքով, բոնութեամբ, հիմա՝ հրապուրում են հեշտասիրութեամբ, նիւթապաշտութեամբ, եւ վերջինն աւելի վտանգաւոր բշտամի է, աւելի նենգ եւ դժուար նշմարուող: Դա է պատճառը, որ պարսից կրակապաշտութեան դէմ խոյացած ու յաղթանակ տարած ուժը անգօր դարձաւ օտարամոլութեան, այլ ազդեցութիւնների առջեւ, «հայ-հոռոմ, հայ-հոռմեական, հայ-բողոքական եւ հայ-ռուս» մականունները վերցրեց հնազանդօրէն, եւ ինչն իսկ ազգի թուլացման պատճառ դարձաւ: «Մեր նախնիք իրենց վեհ պարանոցները երկարեցին բոնաւորութեան սրոյն առջեւ իրենց ազատութեան եւ հայրենի օրինաց պահպանութեան համար. մենք պարտապան ենք գոնէ մեր պարանոցը խոնարհել լուսաւորութեան հեգ լծոյն տակ. վասն զի, այժմեան դարուս մէջ ազգաց պաշպանողական զենքն է դաստիարակութիւն եւ լուսաւորութիւն»²:

¹ Սոնն, էջ 35

² Անդ, էջ 39:

Ժառանգաւորներից միայն նուիրում է ակնկալում եւ որպէս պատգամ տնօրէնը յորդորում է գործել յօգուտ եկեղեցու, ազգի, յօգուտ մարդկութեան;

Նոյն թուականի յունիսեան համարում Գ. Մուրատեանց ստորագրութեամբ տպագրուած է «Ուխտ հայրենասիրի» յօդուածը, որը նախորդի տրամաբանական շարունակութիւնն է՝ հայրենիք եւ հայրենասիրութիւն, ազգ եւ ազգասիրութիւն, շատ սովորական, բայց միշտ խորհելու կարիք ունեցող հասկացութիւնների մասին: Եւ դժուար է յստակ գծել հայրենասիրութեան եւ ազգասիրութեան միջով անցնող սահմանը, դրանք փոխկապակցուած են եւ անբաժանելի: Ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը սկսում են ընտանիքից եւ աւարտում մարդկութեան հանդէպ սիրով: Աստուած է կամեցել ու տնօրինել այդպէս՝ փոքրից դէպի մեծ. «Երբ կը փափաքինք բարիք առնել մարդկութեան մէր տաղանդով, հանճարով ու ստացուածքով, մատակարարութիւնը մեր հայրենիքէն եւ ազգէն սկսինք, վասն զի առանց ընտանեկան սիրոյ՝ հայրենասիրութիւն չըկայ, եւ ոչ առանց հայրենասիրութեան՝ մարդասիրութիւն. վասն զի նշմարիտ դպրոց մարդասիրութեան՝ հայրենասիրութիւնն է, եւ դպրոց հայրենասիրութեան՝ ոգին ընտանեաց»³: Եւ անմեկնելի ու հրեշաւոր է, երբ յանուն սեփական ազգի ու հայրենիքի մէկ այլ երկրի կործանման պատճառ են դառնում: Հայրենիքն է իւրաքանչիւրի սկիզբն ու վերջը, մարմինն ու արիւնը, հայրենիքը քաղցր է անգամ «ոսկերաց համար», եւ որքան բշուառ է հայրենեաց վիճակը, այնքան սիրելի ու թանկ է մեր սրտերի համար, որովհետեւ հարստութիւնն ու պերճանքը չէ, որ գայթակղում են հայրենասէրին: «Այն ազգասէրը, որ կը տեսնէ իւր եղբայրը եւ ազգականը մոլորուած ոչխարներու նման ցրուած, անտուն, անօգնական, ընտանեկան եւ հայրենական մխիթարութենէ զրկուած, մոխիրը իրենց համար հաց դարձած եւ իրենց ըմպելին քրտամբ եւ արտասուօք խառնուած, յերկրէ երկիր թափառական, իրենց անունը եւ յիշատակը մոռցած, այն վշտաչարչար ազգասէրը ինչպէս չուխտեր. «Ուխտիւք խնդրէի նզով լինիլ ի Քրիստոսէ վասն ազգականաց իմոց եւ ազգականաց ըստ մարմնոյ»⁴:

1868 թ. յուլիսեան համարում առանց ստորագրութեան տպագրուած է «Հարեւանցի ակնարկ արեւելեան հնախօսութեան վրայ» փոքրիկ յօդուածը, որը, դատելով լեզուից ու ոճից, պատկանում է Գ. Մուրատեանցի գրչին: ԺԹ դարը բնագիտութեան բուն զարգացման սկիզբն էր, բայց յօդուածագիրը նկատում է, որան գուգահեռ մեծացել է հետաքրքրութիւնը անցեալի արժեքների նկատմամբ: Եւրոպայում օրեցօր աճում է հետաքրքրութիւնը եգիպտոսի, Բաբելոնի, Ասորիքի ու Ասորեստանի նկատմամբ, պատկերագրերն ու սեպագրերն դադարել են լուռ ու անմեկնելի յիշատակներ լինելուց: Արեւմուտքի թանգարանները հարստանում են Արեւելքի նախկին փառքի նշխարներով, եւ հնախօսութիւնը հիմնարար գիտութիւնների թուին է դասւում: Իսկ մենք ինչպէս ենք վարւում մեր մասունքների հետ. «Բաւական է միայն, որ կ'ողբանք, առանց հետախուզելու եւ գործելու: Շատերուն տակաւին մեր Հայրենեաց մակերեւոյթն անգամ անծանօթ է...»⁵: Հնագիտական ուսումնասիրութիւնների հնարաւորութիւնը դեռ չի դիտարկում հեղինակը, բայց ձեռագիր մատենաները նոյնպէս անուշադրութեան են մատնուած: «Եթէ կը խոստովանինք որ Արեւելեան աշխարհի գեղեցկավայրն Հայաստան մեր հայրենիքն է, պարտաւոր ենք անշուշտ մեր ծնողաց եւ մեր երկրաւոր ժառանգութեան մնացորդները որոնել եւ ի լոյս արել հանել եւ այսպէս ներկայ եւ անցեալ իրարու հետ

³ «Սիոն», 1868, ք. 6, էջ 125:

⁴ Հոտմ. Թ. 3:

⁵ «Սիոն», էջ 163:

համեմատելով՝ մեր ապագայի վրայ ուղիղ տեսութեամբ խորհիլ»⁶: Այս կարճ հրապարակման նպատակն է ուսմանակ հայրենակիցների ուշադրութիւնը հրաւիրել կայսրութեանը՝ Բուխարայի եւ Սամարղանդի միացման հնարաւոր տարբերակի վրայ, իսկ այստեղ փակուած են մեծ թուով մատենաներ, որոնք չի բացառում, որ եզակի կը լինեն ու կը յաւելեն մեր գիտելիքները. «եթէ արդարեւ՝ սոյն օրինակ աւանդութիւն մի իրականութիւն ստանայ, այն ժամանակ պիտի ստիպուինք Լենկթեմուրի բռնակալութեան աւելի գոն լինել, քան թէ այն բարեպաշտ կարծուած հայկական սովորութեան, որուն համար ստոյգ թէ անստոյգ կ'աւանդուի թէ՛ շատ ձեռագիր մատենաներ թաղուեր են հողի մէջ, որպէս զի օտարաց ձեռքը չանցնի»⁷:

1868 թ. սեպտեմբերեան համարում «Գ. Մ.» ստորագրութեամբ լոյս է տեսել «Խաչ
օգնեա՛ ինձ» (նուէր ծնողասէր մանկանց) չափածոյ գործը:

«Սիոն» ամսօրեայի 1871 թ. երկրորդ համարից տեղեկանում ենք, որ մահտեսի կարապետ Մուրատեան կարենցու աջակցութեամբ լոյս է տեսել Մուրատեանց վարդապետի գիրքը՝ «*Պատմութիւն Նոր Կտակարանի*» (320 էջ), որը «*Կը պարունակէ Նոր Կտակարանի պատմութիւնը, խնամով եւ դասակարգութեամբ քաղուածեալ ի չորից Աւետարանչաց եւ ի Գործոց Առաքելոց*»⁸: Այդ ամէնը հեղինակը համեմել էր բարոյական խորհուրդներով: Եւ որպէս զի ընթերցողի համար աւելի լիակատար լինի նոր հրատարակութեան պատկերը, «Սիոնի» յիշեալ համարում տպագրուած էր Մելքիսեդեկ վարդապետի գրքի առաջաբանը: Այստեղ դարձեալ հայ մարդու, մտաւորականի նոյն խոհերն ու անհանգստութիւնն են ազգային կրթութեան, դաստիարակութեան հարցերի շուրջ: Նա փորձում է բացայայտել դրանց խոցելի, բոյլ կողմերը: Ազգային դպրոցներում կարեւոր- փորձում է բացայայտել դրանց խոցելի, բոյլ կողմերը: Ազգային դպրոցներում կարեւոր- ւում են երկրորդական «ուսանելիքները»: Մոռացութեան է մատնուած, որ ուսուցման եւ ընկերային կեանքի «Համեմիչ աղը» քրիստոնեական ուսմունքն է, որը կամ իսպառ- բացակայում է, կամ միայն ստուերն է մնացել դպրոցներում: Հեղինակի համոզմամբ նաեւ բացակայում է, կամ միայն ստուերն է մնացել դպրոցներում: Հեղինակի համոզմամբ նաեւ դա է պատճառը, որ դպրոցը յաճախ կառավարան է դառնում եւ ուսուցչի, եւ աշակերտի համար. «*Չը կայ դպրոցական գերդաստանի անդամոց մէջ փոխադարձ սիրոյ եւ համար. «Չը կայ դպրոցական գերդաստանի անդամոց մէջ փոխադարձ սիրոյ եւ համար.*

վստահութեան այն սուրբ եւ խորհրդաւոր կապը, որ կը քաղցրացնէ ուսուցչի աշխատանքը եւ կը բեղմնաւորէ աշակերտի եռանդն ու ջանքը»⁹: Մարդու բովանդակ դաստիարակու- թիւնը պէտք է սկսուի ու իր տրամաբանական աւարտին հասնի քրիստոնեական ուսմունքի հետ շաղաղուած, սնուած նրանով: Վարդապետը Առաջաբանում, ինչպէս նախորդ իր խնդիրն: Այդ ուսմունքը դեղ չէ, որ կարիլ-կարիլ ներարկուի, այլ Սուրբ Գիրքը կենդանի աղբիւր է, որից պիտի սնուի ու չլազենայ սովորողը:

«Հատուտիւր մտածութիւնը»

«Սիոնը», տարին՝ 1871 թ., եզրափակում է «Հատընտիր մտածութիւնը» դաստիարակութեան ու կրթութեան խնդիրներին նուիրուած հեթրթական նւիրով, որ այն անստորագիր է, բայց դատելով ոնից, մօտեցումներից, թերեւս կարելի է ենթադրել, որ այն պատկանում է Մելքիսեդեկ Վարդապետի գրչին: Դարձեալ հոգսն ու մտածմունքը մէկն է՝ անհատի ներդաշնակ եւ կատարեալ դաստիարակութիւնը, քանզի դրա մէջ է ամփոփուած մարդկային երջանկութեան խորհուրդը: Դաստիարակութեամբ է սերմանում տաղանդը՝ մտքի, առաքինութիւնը՝ վարքի, սերը սրտի մէջ: Յօդուածի հենց սկզբից հեղինակը մտքի, առաքինութիւնը՝ վարքի, սերը սրտի մէջ: Յօդուածի հենց սկզբից հեղինակը փորձում է տալ կատարեալ մարդու «սահմանումը»: «Կատարեալ մարդը նա է, որ կ'ապրի

⁶ 𐎲𐎠𐎧, l. 164:

⁷ Նոյն տեղում, էջ 164:

⁸ «Սիոն», 1871, ք. 10, էջ 43:

⁹ $\mathcal{U} \mathcal{E} \eta$:

կրօնական եւ ընկերական կեանքով, միանգամայն եւ կը յառաջէ ի ճանապարհի Աստուծոյ եւ բնական լուսոյ»¹⁰: Իսկ «լոյսը վառելու», կրակը բորբ պահելու միակ ճանապարհը դաստիարակութիւնն է, որն, ի դէպ, պէտք է սկսուի ոչ թէ դպրոցից, այլ աշխարհ գալու առաջին իսկ պահից: Այսինքն, մարդու առաջին դաստիարակը մայրն է. «Երկրին օգնելու եւ ժողովուրդը վերականգնելու համար՝ ոչ թէ թագաւորներ եւ թագունիք կոչելու է, այլ մայրական ազդեցութիւնը եւ ապա վարժարաններն ու համալսարանները»¹¹: Միայն մայրական գործունեութիւնն է ներազդում սրտի վրայ եւ սրտից է, որ ուղղորդում է դէպի միտքը: Դաստիարակութեան գլխաւոր նախապայմանները երկուսն են՝ սերն ու աշխատանքը: Երեխային պէտք է սիրել ինչպէս Քրիստոսին՝ անմնացորդ: Միայն սիրոյ առկայութեամբ են հնարաւոր գեղեցիկ գոհողութիւնները: Միայն սիրոյ առկայութեամբ են յաղթահարելի գոհողութիւններն ու զրկանքները: Իսկ զէնքով եւ ուժով ձեռք բերուածը անցողիկ է եւ սին: Պատմութիւնը լաւ է մտապահել բազում նմաների անունները՝ Կեսարից մինչեւ Լենին Թեմուր: Մենք այսօր կարող ենք յաւելել այդ շարքը հարիւրաւորներով: «Մի ազգ կամ ժողովուրդ լուսաւորուելով միայն կը մեծանայ եւ ոչ թէ մարդկային արեան հեղեղներ թափելով»¹²: Ազգի ապահովութիւնն ու անվտանգութիւնը, ոչ թէ թնդանօթների, այլ ուսեալ մարդկանց թուի մէջ պէտք է որոնենք: Սա է ազատութեան եւ ճշմարտութեան «վերջնագագաթը»:

1872թ. մայիսին ժառանգաւորաց վարժարանի ուսումնական խորհրդի անունից ատենապետ Մելքիսեդէկ Վարդապետի ստորագրութեամբ լոյս է տեսնում «Ծրագիր ուսմանց ժառանգաւորաց վարժարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց եւ պայմանք ընդունելութեան աշակերտաց»-ը: «Սիոնի» խմբագրութիւնը զետեղելով փաստաթուղթը յոյս էր տածում, որ պարբերականները կ'արտատպեն այն՝ ի գիտութիւն «ուսումնասէր Ազգայնոց»¹³:

Ազային հոգեւոր դաստիարակութեան խնդիրը, որպէս ազգապահպանման հիմնաքար շարունակում էր մնալ մեզ հետաքրքրող գործչի, հետեւաբար նաեւ «Սիոն» հանդէսի ուշադրութեան կենտրոնում: 1871թ. մարտեան համարն սկսւում է «Ազգային, բանասիրական եւ գրագիտական» խորագրի տակ տպագրուած «Ուսումն քրիստոնէութեան» անստորագիր յօդուածով: Սակայն, դատելով ոնից, ելնելով այն սկզբունքներից, որոնցով անխոտոր առաջնորդւում էր Մուրատեանցը, հաւանաբար կարող ենք ենթադրել, որ հեղինակը նա է: Դատելով ըստ ամենայնի, ժամանակակիցները յաճախ են ընդգծել, թէ քրիստոնէական ուսմունքի դերը՝ նախկինի համեմատութեամբ նսեմացել է, եւ ազգային դաստիարակութեան գործը բարձիթողի վիճակում է: Յօդուածագիրը առաջին պատասխանը հասցնում է հենց նմաններին. «...մարդ՝ քրիստոնէութիւնը ուսանելու է իբրեւ առաջին պարտաւորութիւն ոչ անոր համար, որ հեթանոսութենէ արժարժուած պատերազմի առաջն առնէ, այլ ճշմարտապէս գԱստուած ճանաչելու, սիրելու եւ նմա ծառայելու, առանց որոյ մարդ չէ կարող հանգիստ եւ երջանիկ լինել»¹⁴: Ինչ մնում է յանուն հաւատքի հետապնդումների, որոնք եղել են քրիստոնէութեան ծագման արշալոյսից սկսած, ապա դրանք աւելի ամրացնում ու զօրացնում են հաւատը,

¹⁰ «Սիոն», 1871, ք. 12, էջ 279:

¹¹ Նոյն տեղում:

¹² «Սիոն», 1871, ք. 12, էջ 280:

¹³ «Սիոն», 1872, ք. 5, էջ 100:

¹⁴ «Սիոն», 1874, ք. 3, էջ 51:

ընդօրինակել, իսկ ինչ առաջադիմական է, ազգօգուտ, ազգաշէն, ինչ որ ազնուացնում ու բարձրացնում է մարդու արժանապատուութիւնը, նաշակը՝ «տակաւին առած չեմք»: Եւ դարձեալ գալիս ենք այն մտքին, որ Մելքիսեդէկ Վարդապետին յուզող խնդիրները դար ու կես անց մնում են արդիական:

«Սիոն» 1874թ. ութերորդ համարն սկսում է Մելքիսեդէկ Վարդապետի՝ օտար լեզուից փոխադրած «Կարևոր է ուսանիլ զմարդն: Կարևոր է մարդոյ ուսումն նկատել իբրեւ հիմն բանաւորական դաստիարակութեան» ծաւալուն յօդուածով, որն սկսում է հին դարերի էքսկուրսով, բժշկագիտութեան արշալոյսի դիտարկումներով և հասնում մինչեւ ԺԺ դար: Շատ հիւանդութիւնների տարածման պատճառը տգիտութիւնն է, չիմացութիւնը, սնոտիապաշտութիւնը, անհմուտ մասնագէտների գործունէութիւնը: Եւ որպէս զի կանխուի դրանց վատ ազդեցութիւնը Մուրատեանցը անհրաժեշտ է համարում, որ մայրերն ու հայրերը սկզբնական անհրաժեշտ գիտելիքները ունենան մարդակազմութեան մասին: Նման հրապարակումները այդ գիտելիքները սերմանելու միջոցներից մեկն են: Նա իրաւացիօրէն համոզուած է, որ ազատութիւնն ու առողջութիւնը լուսաւորութեան եւ գիտութեան դուստրերն են: Մինչդեռ սնոտիապաշտութիւնը և տգիտութիւնը արմատներն են թշուառութեան, չքաւորութեան, հիւանդութեան: Իւրաքանչիւր ծնողի և զաւակի երջանկութեան հիմքը կրթութիւնն ու դաստիարակութիւնն են: Դարձեալ իր շրջանն է վերադառնում Մուրատեանց:

1875թ. հինգերորդ համարում ուսերէնից՝ «Գոլոս» լրագրից Մուրատեանի բարգմանութեամբ ներկայացուած է «Քննութիւն. Աստուածաբանութեան վարդապետի (դօքտորի) աստիճան ստանալու համար»: Լրագիրը տեղեկացրել է, թէ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի և Ակադեմիայի եկեղեցու պատմութեան ուսուցիչ՝ Պ. Տրոիցկին դոկտորի (վարդապետական աստիճան) հայցելու համար գրել է «Բացատրութիւն դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, զոր գրեաց Ներսէս Շնորհալի ի խնդրոյ կիտ Մանուէլ Կայսեր յունաց: Պատմական և վարդապետական հետազօտութիւն յաղագս միացուցանելոյ զեկեղեցին Հայոց ընդ եկեղեցւոյն Ռուսաց» ատենախօսութիւնը: Դաւանաբանական տեսակէտից մանրամասն քննուած աշխատանքը դուրս է մեր հետաքրքրութեան ոլորտից: Նկատենք միայն, որ հէնց հրապարակային պաշտպանութեան ժամանակ և ընդդիմախօսները, և խորհրդի նախագահ Իսիդոր Մետրոպոլիտը պաշտպանեալին մեղադրել են աւելորդ քաղաքականացումութեան, Հայ եկեղեցու հասցէին գրուած անվայել արտայայտութիւնների համար: Եկեղեցի, որ արժանի է ամենայն յարգանքի:

Մելքիսեդէկ Վարդապետը 1867-1877թթ. պաշտօնավարեց Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում, իր նկատելի աւանդը մուծեց ժառանգաւորաց վարժարանի ուսումնական կեանքում, «Սիոն» հանդէսի էջերում տպագրեց ինքնուրոյն եւ թարգմանական յօդուածներ, նկատողութիւններ, որոնց նիւթն ու նպատակը Հայ եկեղեցու անասանութիւնն էր, մատաղ սերնդի հայեցի կրթութեան անհրաժեշտութեան հաստատումը, նրան ոչ միայն հայրենասիրութեան, այլեւ մարդասիրութեան վեհ գաղափարներով դաստիարակելը:

ԱՆԻ ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ